

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
Տասնկան վեցամսեայ	6
Արսասահմանի համար տարեկան	15
Վեցամսեայ	8
Անկերիկայի համար տարեկան	3 ֆր.
Վեցամսեայ	1.50

Ծանուցման տողը սուս քիև երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ :

Վառնայի համար ձևոճի 10 սանթիմ

ՇԱՐՄԻՆ

Լատինի և ֆրանսիացի լատինացիներու համար

Редакция на вѣстники "Шаржумъ" Варна

Redaction du journal "Char oum" (Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար ձևոճի 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձևոճի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և ս չնկ տրուի

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՔԻՆ. ՔԱՂՈՔԱՎԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՐՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՄԱՔ ՕՐԵՐԸ

«ՇԱՐՄԻՆ» Ի ԲԱՃԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃԱՆԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐԵ

ՄԻՒԹԱՐՈՒԹԻՒՆ ՏՈՒԷՔ

Կոտորած, կոտորուած ու թալան... Մի՞թէ՞ դրանք հայութեան անջնջելի ճակատագիրն են. մի՞թէ՞ դրանք յաւիտեան անբաժան պէտք է լինեն նրա անագորոյն վիճակից: Կոտորուած է նրան ջրերը, տաճիկը եւ ամէն ոք, ով ուզում է: Կոտորուած են նրան՝ օսմանեան միջոցաւ պատուութեան մէջ, կոտորուած են եւ քրքրատունեայ պատուութեան գահի հովանաւորութեան ներքոյ: Հալածուած է նրա գոյութիւնը. ջնջուած են, ուր և փախչում է նա:

Ողորմած Աստուած, այդ ի՞նչ ճակատագիր է...

Մեր լացով, աղերսանքով լցուից ամբողջ աշխարհը, մենք այլեւս աշխարհին միայն մեծաքանակ որբեր տուող ազգ ենք: Դեռ երէկ էր, համաշխարհային մտաբանութեամբ ապրուստ էր ժողովուրդ մեր որբերի համար, դեռ չեն ցամաքել մեր աչքերից անցեալ վշտերի պատճառած արցունքները, ահա այսօր իր անողորմ սարսափով, իր քամակի իրականութեամբ մեր առջեւ է կանգնած Բազումը, Բազումը մի ժամանակ հրէշաւոր ներթապալուածութեան մէջ՝ այլանդակ «Սողոմ.Փոսորը» իսկ այժմ արդէն իսկական արիւն-աւերածի, կրակի ու գազանութեան Սողոմ.Փոսորը: Եւ նա կանգնած իր անողորմ ճակատագրային հարուածի տակ, ուզում է... ողորմութիւն է ուզում և մենք պէտք է տանք... որբերի համար հաց եւ ուտում է ուզում եւ մենք պէտք է տանք... իր մարտիրոսագրութեան յիշատակն անմահացնել է ուզում եւ մենք պէտք է տանք... պէտք է տանք պէտք է տանք այդ դրոշմանոց բարի գործերը մի լիծներին քաղաքին:

Միլիոններին խոստումը անկարող եղաւ փրկել դեռ երէկ յանցաւոր անտարբերութեան եւ սպանիչ մեղութեան մէջ ապրող հայ հարուստի կեանքը: Միայն ճիւղալային քրքիջներ եղան նրա կանչի պատասխանը: Եւ մեր սիրտն այսօր ծղրտում է առաւել այդ վէրքից: Ներքեք մեզ, մենք կարող չնզանք հանդուրժել եւ գեռ մեզ միութարուած չենք զգում... Միութարութիւն... դա է մնացել վէրքերի ու ցաւերի անբաժան ուղեկից մեր վիճակի միակ սր փոփանքը: Մենք կորցնում ենք, մենք հարուստուած ենք, լալիս ենք, կորչում ենք եւ սպա պէտք է միութարութեանը... մոռանալով կորցրածը, ընտելանալով ստացած վէրքի ցաւին...

Եւ այսօր մենք նոյն միութարութիւնն ենք առաջարկում հայոց Մեռուած ծնատուած, գիշատուած սրտին: Արդեօք ու եւ է միութարութիւն կայ այդ սրտի համար: Մտաբերեցէք, ինչքան կրեց նա ամենակարճ ժամանակի ընթացքում. անթիւ անգամներ խոցոտուեց այդ սրտը, անթիւ անբուժելի վէրքերով. ինչպիսի՞ մի միութարութիւն ունենք որ կարող լինի, յանդգնութիւն ունենայ՝ մոռանալ այդ խոցերը: Երբեւ միայն ու միայն դարբերի բեռը շաղկած «չիք չարիք առանց բարիքին» եւ դժբաղդ Լեթան, որոնք առանց մեր ջանքերի էլ կան ու կան: Ի՞նչ տանք... չենք կարող մերժել, այո՛, պէտք է միութարութեւ. բայց ինչպէ՞ս եւ ինչո՞վ միութարութեւ... Մեր ամենաջերմ ցանկութիւնն է, որ հայ հարուստը զուրս գայ այլեւս իր յանցաւոր անտարբերութիւնից, իսկ բովանդակ հայ ժողովուրդը ըստ թափու է իր մրափից... ահա ինչպիսի միութարութեան պէտք ունենք մենք: Մեր ամենաջերմ ցանկութիւնն է, որ համատարած եղաւորութեւնը տիրէ մեր երկրի բոլոր ազգութիւնների մէջ, միակ անմեռ կը մնան մեր սրտերում փետրվար 13ի եւ 14ի ջերմ, գեղեցիկ ու պայծառ օրերը, որոնք մի-մի հսկայական սպտակ էին ազգերի եղբայրութեան թշնամու երեսին...

Ամօքենք թշուառացածների վիճակը. միութարութեւ մեր սրտերը այն պիտի միութարութեամբ, որ չը խեղճանայ բացուած վէրքի ահաւորութեան առաջ:

Մենք մի քանի ընկերներ դիմելով յարգելի խմբագրութեանը, խոնարհարար խնդրում ենք թարգման հանդիսաւալ մեր զգացմունքներին՝ տրպելով այս փոքրիկ նամակը «Շարժումում», որը, որ եւ է պատճառով կարելի չեղաւ հրատարակել կովկասի թերթերում:

Ի դիմաց ընկերների ՖԱԼԱԳ Թիֆլիս, 16 փետր.

ԲԱՆԱԿԱՆ Է ()

Չորս հինգ օր ամբողջ գիւլային խաղ էր խաղում Բագուի հայութեան գլխին, Չորս հինգ օր անընդհատ, դժոխային շարժանգոյց ձիւղով գիւլային:

() Այս յօդուածը այստեղի թերթերում չի կարողանալով հրատարակել ուղարկում եմ Շարժումին: Մ. Հ.

տուժ էին նրան իր խայտառակութեան մէջ: Խայտառակութիւն, այո՛, եւ ոչ մարտիրոսագրութիւն, ինչպէս անուանեցին այդ: Ո՛չ մի վեհութիւն ոչ մի նշան մարտիրոսութեան, ցոյց չուեց Բագուի հայ ժողովուրդը այդ արիւնի օրերում. արիւնի օրերում, երբ բոլորովին շապատած տեղից պէտք է առաջ գային վեհութեան և մարտիրոսութեան պատկանելի օրինակներ:

Սարսափի օրերին չքացել էին նոյն իսկ լրագրական թղթակիցները: Միայն օտարազգի թղթակիցն էր շրջում հայ արիւնի, աւերակների վրայ եւ թող զայրոյթով նրանց քստմեղիւթեան անգոյն նկարագիրը տալիս: Նկարագիրը ոչխարի պէս կոտորուող և նապաստակի պէս փախչող հայերի: Բագուի շէր լաւում և ոչ մէկ հայի ձայնը: Ո՛ւր էին նրանք... նրանք փախչում էին և իրանց փախուստի մէջ աւելի սարսափելի էին, քան արիւնաւառ կոտորուածները իրանց արիւնների սրբով: Փախում էին և թագնվում... սնտուկների մէջ. պահարանների մէջ, ներքնատներում և ամեն մի տեղում, ուր մտքից վեր կը լինէր երեսակայել. թէ մարդիկ կարող են լինել, ի՞նչ անուն կարելի է տալ նրան, Բագուի հայր փախչում էր և լուսամտաւ ճեղքից օրեր շարունակ դիտում էր փողոցում կատարուող վայրագութիւնները: Նա լուսամտի այդ ճեղքից տեսնում էր. թէ ինչպէս մորթում, գնդակահար են անում անպաշտպան հային, նա տեսնում և շարունակում է նայել. նայել անասնային բթամտութեամբ, Ուրիշ անուն տալ անկարելի է, Տեսնել անպաշտպանութիւնը վայրագ կատարութեան առաջ և հանդուրժել — դա անասնութիւնից էլ ստոր է:

Բագուի հայ, ո՛ւր էր քո հոգին այդ րոպէին, որ քեզ տարբերային կատարութեամբ առաջ մղէր պաշտպանելու անպաշտպանութիւնը, եթէ հրազէն չունէիր ձեռքիդ, կը խլէիր մի փայտի կտոր, այդ էլ բաւական էր. եթէ այդ էլ չէր լինէր, քո ձեռքերդ նորից բաւական կ'իս քեզ: Բայց ողորմելի, լաթ՞ ես գու՛, լաթ՞ եւ չէ տուած քեզ հերոս լինելու բարձր առաքինութիւնը: Եթէ ցեղային արիւնը չէր խոսում քո մէջ, թող գէթ մարդկային էն տարրական բնագործ չմեղցնէիր դու: Դորը զուլ է մարդուն, պաշտպանելու թոյլին գործի առաջ: Եւ ի՞նչ էր քեզ կոտորող ոյժը: Փողոցային սիւղքոր ամբոխ, որի ձեռքը պատահամբ զէնք էր ընկել եւ որին տերեւի նման ցըրիւ սալու համար հարկաւոր էին:

Միայն մի քանի փայտեր երգում եմ այո՛, միայն մի քանի փայտեր: Այդ դու շրկարողացար անել և երեւի իսպառ պիտի ջնջուէիր, եթէ իրանց կապանքը կոտորելով, դուրս չի պրծէին քո առած արհամարիւած մի քանի տղաները: Այն անլուր եղեր որ կատարում էր Բագուի փողոցներում և տեսնում էր: դու տեսնում էիր: դու զգուշի վախկոտութեամբ գիտում էիր այնպիսի պատկերներ, որոնց առաջ մարդը մի վայրկեան ունգամ չի կարող մտածել կեանքի և ապրելու մասին: Դու որ համբերեցիր և տարար այդ ծայրագոյն խայտառակութիւնը, կարծում ես որ դրա համար քեզ երկայնամիտ, խոնձմ կասեն: Ո՛չ դու դրանով ապացուցիր որ հոգի չունիս. ապացուցիր որ քո մէջ չկայ այն սրբազան զայրոյթը, որով մարդը բարձրանում է անասնութիւնից 4 Գիտեմ, գիտեմ, գու որ վախկոտութեամբ տարար գլխիդ խաղացում այդ խայտառակ խաղը. զգուշի վախկոտութեամբ էլ կուլ կ'ուտաս նրան... եւ կանցնի կը. մոռցուի, կերթայ... Մի ժողովուրդ, որ կարող է կուլ տալ այնպիսի— մի հոգու մէջ չի պարտակող խայտառակութիւն նա իրաւունք չունի ապրելու: Զուր է արդարացում փնտաել, եթէ չկան օրինական միջոցներ հրէշագործութիւնը պատժելու, կայ Լիւնչի օրէնքը, որը պէտք է զոյժադրէ ինքը ժողովուրդը... Բագուի գլխովն անցածը երբէք չը պէտք է մոռնալ անդադար պէտք է գրել, պէտք է յուզել, խօսել, մինչեւ որ շարագործութիւն արժանի հատուցումն ստանայ:

Բայց դրանով չի վերջանում Բագուի հայի խայտառակութիւնը, Կոտորածն ու սպանութիւնները դադարեցին, նա կատարած հսկայ եղեռնագործութեան դիմաց դրեց մի այնպիսի ողորմելի հայել, որի իր գատապարտութեան կնիքը կղաւ: Նա հանդէս եկաւ լրագրական էջերում այնպիսի խեղճ ու կրակ նամակներով որոնք բացի իր խայտառակութիւնը պատմելուց, ուրիշ ոչինչ չէին ստում: Մարդիկ որոնք գարշելի վախկոտներ լինելուց յետոյ, չեն քայլում իրանց իսկ ձեռքով գրի առնել այդ վախկոտութիւնը, մարդիկ որոնք գրում են անհից չորացել էինք», «սարսափից խեղճներս կորցրել էինք» տեսնում էինք, ինչպէս սպանում են անպաշտպան մարդկանց, երբ օր տակաւնների և արկղների մէջ մնացինք, ահ լինեք դիպեցինք վրանս... եւն, Մարդիկ, որոնք թող են ապիս իրանց լեզուով խոստովանել օփնտուած էինք տեղ թագնեւելու, քիչ էր մնա-

ցել արտաքնոցի հորերը մտնէինք... Ուէ, գրանք միայն նողկանք են առաջացնում... Այդ խայտառակութիւնը հեռացնելու համար, Բագրի հայերին պէտք է չէր հերոս լինել: Առանց բնածին հերոսութեան էլ այդ կարելի էր անել, Ինչ, եղաք, եղաք, Ի սէր Աստուծոյ գէթ զաղարեցէք մեր առաջ գնել, ձեր խայտառակութեան նմուշները...

Բաւական է... ՅԱԼԱԳ Թիֆլիս 2 մարտ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

(Արտասահմանում հրատարակվող ուսուստիքի ամսագրից) (Շար. Ասիտոյ քիւն)

Այդ միջոցներում տաճկահայերը հիւժժված էին թրքական լըծի ճնշումից, թուրքերի բարբարոսական ձեւերով ծանր հարկեր հաւաքելուց և վայրի քիւրտ ցեղերի յարձակումներից: Տաճկահայի տնտեսական վիճակը խորտակված էր. գիւղացին անկարող էր քիչ թէ շատ իր հողը մշակել. որովհետև ոչ միայն նրա ձեռքից հունձքն էին խլում, այլև բանող անասունները, Հայ ժողովրդի դժգոհութիւնը իր կացութեան դէմ օրէցօր աճում էր. մանաւանդ երբ նրանց մէջ էլ թափանցեցին կովկասեան գորղները: Տաճկահայերը իրենց թոյլ լինելը զգալով Սուլթանի զորութեան դէմ, օգնութիւն էին սպասում կովկասեան հայերից և երբ 78 թուականին ուսուստիքի զորութեամբ իրենց հասաւ, նրանք կարծեցին որ այդ զորքը ուսուստիքի կողմից իրենց օգնութեան է զրկված: Այդ զորքը մեծ ոգեւորութեամբ ընդունվեց

տաճկահայերի կողմից և նրանք հրճուած արդէն ստեղծ էին ձեռք բերված ազատութիւնը: Բայց այդ երազը յանկարծ մի ամբողջ գիշերում փոխվեց խաւարին իրականութեան: Ռուս զորքերը շուտով վերադարձան իրենց երկիրը, հայերին թողնելով զոհ թուրք կառավարութեան քրմահոնքին, որը իր պարտութեան վրէժը, մանաւանդ ուսուստիքի զորքերին ցոյց տրված համակրութեան համար, հայերից սկըսեց լուծել:

Այդ միջոցներում եւրոպական դիւանագիտութիւնը Բերլինի վեհաժողովում, Բիւսարկի զեկավարութեամբ ոչնչացնում էր հայերի բոլոր յոյսերը, ու փոխանակ հայերին ազատութիւն տրվելու վեց պետութեանց կեղծ հովանաւորութիւնը տրվեց: Իսկ Սուլթանի կառավարութիւնը մըշակեց հայերին ջնջելու մի ծրարագիր, վեց նահանգներում էլ և սրի ու կրակի միջոցով միջնու այդ օրերը չը անսոված գաղտնութեամբ գործադրել սկսեց:

Այդպիսով 78 թուականից յետոյ հայերի վիճակը աւելի վատթարացաւ: Ան նրանք, որոնք զգացել էին ազատութեան մտիկութիւնը զգալ, ու զղայել էլ էին, աւելի զօրաւոր կերպով զգացին նոր աւելի գաղտնային ձեւով կատարված ճնշումի անտանելիութիւնը: Այդպէս շարունակել անկարելի էր. այդ զղում էին թէ տաճկահայերը եւ թէ ուսուստիքի: Տաճկահայերը մտածում էին որ ուսուստիքի իրենց օգնութեան հասնեն զէնքով ինքնապաշտպանութեան և ազատութեան կռիւ մղելու համար: Եւ կովկասահայերն էլ օգնութեան հասան: 70 թուականների ոգով կրթված երիտասար-

գութիւնը մտաւ այդ նոր հոսանքի մէջ: Հայդուկային խմբեր սկսեցին մտնել տաճկահայաստան, իրենցով ոգեւորութիւն ներշնչելով տեղացիներին: Շուտով կազմվեցին յիդափոխական մարմիններ, որոնք չը բաւականացան միայն հայդուկային խմբերով, այլ գործունէութեան ծրագրերը կազմեցին: Նրանք նպատակ դրին ապստամբեցնել Հայաստանի մի խոշոր մաս: Յեղափոխականները մի մասը մտնում էր ժողովրդի մէջ և եռանդուն կերպով քարոզում, իսկ միւս մասը զէնքեր պատրաստում և երկիր ներմուծում:

ՆԱՐԵՐՈՒ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Այնպիսիս մէջ չկայ կենդանի արարած մը, որուն կեանքը այնչափ մեծ խնամքով հսկուի, որչափ ուսուցանելը, մանաւանդ այսօր, Բայց ան ալ ճշմարտութիւն մըն է, որ ոչ մէկ կեանքի այնչափ վտանգ կապանայ, որչափ ուսուցարիւն, մանաւանդ այսօր նիւթօր Բ. Կեանքին:

Ան որ ալ գտնուի ան, ձմրային պալատը, ցօւրտ նեւայի ափերուն վրայ, իր Յարսիօէ Սէլօին հրաշալի պալատին մէջ, իր Ղրիմի հրաշալի պարտէզներուն մէջ, կամ թէ Լիվաթի հրաշագեղ պալատին մէջ, իր գտնուած տեղին ամբողջ շրջակայքը կը շրջապատուի գիտնորներու շրջապատով, որը, պիտի կարենաք դիմադրել ամբողջ զօրաբանակի մը: Զինւորական այդ շրջանները հրակողութեան արտաքին նշանները են միայն, որդէս գիցարը փորձանքի մը չի հանդիպի: Պալատին ներսը, միջանցքները, մուտքերը սենեակներուն գոններու առջեւը, սանդուխներուն վրայ, նկուղներուն մէջ, ամեն տեղ պահպանները դրուած են հաւատարիմ թիկնապահներէն, թէեւ անոնց ոչ մէկուն պատահած է որ իրենց զէնքերը գործ դնեն հանդէպ

ցարական թշնամիի մը, որովհետև առնասարակ օտար մարդու մը անկարելի է մանալ ցարերու պալատը առանց զանազան պաշտօնական ձեւակերպութիւններու: Բացի այդ, դաւադրութիւնները չեն կատարուիր ցարերու պալատներու սանիթին տակ: Ատոր համար ցարի կեանքին պահպանութեան, Այնպիսիս մէջ ոչ մէկ ոստիկանութիւն այնքան լաւ չէ կազմակերպուած, որքան ուսուցարական գաղտնի ոստիկանութիւնը. այդ ոստիկանութիւնը իր ցանցը տարածած է ամբողջ աշխարհի մէջ որպէս զի ամեն դաւադրութիւն ցարին դէմ իր սաղմին մէջ բանայ և խեղդէ: Ան իր ներկայացուցիչները ունի Բարիք, Պէրլին, Պոլիս, Պերն... վերջապէս ամեն տեղ: Բուն Ռուսոյ մէջ այդ ոստիկանութիւնը ունի դաւադարներ գործակալներ, ամեն դասակարգերէ, իշխաններ, ուսանողներ վաճառականներ, զորատուներ, ակրտներ եւ այլն:

Անոնց թիւին մէջ են և հիւրանոցի աէրերը, տուն և սենեակներ վարձու առնողները: Ասոնք ամենքն ալ սարսափելի պատիժներու սպասանալիքին տակ ստիպուած են ոստիկանութեան հաղորդել ամեն մէկ օտարականի մասին որոնք իրենց քով բնակարան կը վարձեն և հետախնդրանքները ուսուցարիւններուն:

Բաւ է որ մէկու մը քով յաճախ հաւաքուին տեղի ունենան, կամ թէ ստացուի կասկածելի նամակ մը. իսկոյն ոստիկանութիւնը կը խուժէ այդ բնակարանը կը խուզարկէ ամեն տեղ, կը հաւաքէ բոլոր գրքերն և թուղթերը, մէկ խոսքով սոստական խուզարկութիւն տեղի կուսենայ:

Այդ տեսակ խուզարկութիւններէ վերջ յաճախ կը պատահի որ բոլորովին անսեղ մարդիկ կը ձերբակալուին, որոնք բանտիւրու մէջ կը փոտին այնքան ժամանակ մինչեւ որ գրտնուի ազգեցիկ պաշտպան մը կամ թէ ոստիկանութիւնը համոզուի ատոնց անմեղութեանը:

Իսկապէս ոստիկանութեան համար ամենէն ծանր ժամանակն է ցարին ճամբորդութեանց տանները: Երբ ցարը այդ տեսակ որոշում մը

Ա. ԱՍՏԻՏԵԱՏՐՈՎ

Վիկտորիա Պաւլովնա

(Տօնախմբութիւն) — 0 —

(Գրագիտի յիշողութիւններից) Ամրան արկածներ քաւական սարսիւնակ հուսարակութեան մեջ) — 0 —

(Թարգմ. ուսուստիքից) 20

Ե (Շար. 700րդ քիւն)

Արինա Ֆեոդորովնա, գոռում էր երբեմն մեր շալ ուսանողը, ծաղրական սարսափով, թողէք, ինձ մի նա յեցէք: «Ես քո հեղինակը չեմ սիրում: Թողէք այդ արդէն սպարածներին և մեռածներին»: Չեմ ուզում, դուք ծիծաղում էք Սատիրի պէս. ձեր ժպտի տակ ես ինձ միշտ տեսա

իշուկ եմ զգում: Արտափելի է քեզնից խելացի մարդու դիմքում ժպտ տեսնել: Թող ինձ ժպտայ Վանիկան նրա դէմքը եւ ժպտը քաղցր իմօրիատի յատկանիչ են: Վանիկա, դուք ժպտի Ստէրն էք. Վարյամովը: Ուրեմն այս դէպքի առթիւ խնդրում եմ ներկայացրէք մեզ թէ ինչպէս քաղաքային խոզուկը կայտնում է բնութեան գոգում:

Այդ ինչ է. կարծեմ դուք իմ տընազն էք անում. իմ հաճոյակատարութիւններից յետոյ, ձեր վարմունքը ամենաքիչը, ապերախտութիւն կարելի է տեսնել...

Վանիկայի նմանցնելու տաղանդը, որ գեռ ճանապարհին էր ինձ զարմացրել, մեզ այժմ, երբ տղան բացվեց և էլ չէր քաջվում ինձնից, մեծ գոհունակութիւն էր պատճառում. ծաղրածութիւնը թափում էր վրայից աղամայ:

Բաւական էր որ Վանիկան սկսէր մի սովորական բան պատմել, եւ մենք ծիծաղից կոտորվում էինք. որովհետև այդ դադարկ բաները պատմելով նա զարմանալի ճըլ-

տութեամբ ներկայացնում իր ներկայացրած արարածների դէմքերի ամենանուրբ շարժումները եւ գծերը: Վիկտորիա Պաւլովնան այդ ներկայացումները շարժական սիրում էր: Պատահում էր որ ծիծաղից բոլորովին կարծում էր եւ ձեռքերը թափահարելով աղաղակում:

— Օյ, Վանիկա, հեռացէք, Արինա հեռացրու դրան, ծիծաղից կարելի է հիստերիք դառնալ:

— Ինչքան ձեզ վատ էք զգում. ձեզ հետ հիստերիք է պատահում. հատկապէս եւ հանդիսաւոր կերպով բացականչում էր Վանիկան, ձեռքերը շփելով, ոտքերը գետին զտրկելով և շրթունքները սեղմելով: Վիկտորիան կրկին սկսում էր տեւելի ուժով ծիծաղել, ասելով.

— Կլավորա Սիրգէեւնան, ճիշդ ինքը... այդ նա մեր բժշկուհուն է պատկերացնում, բացատրեց Վիկտորիան:

— Չեզ ոչ թէ Պետրովիչի գրասենեակում նստել, այլ դերասանութիւն պէտք է անել, ասում էր եւ Վանիկային:

Նա պատասխանում էր.

— Ինչ էք ասում. ես ինչպէս կարող եմ:

Իսկ Վիկտորիան ասում էր.

— Աստուած իմ, ինչ լաւ բան է ծիծաղը. որչափ ես սիրում եմ. կայ ծեմ աշխարհում ծիծաղից սուղ եւ լաւ բան չը կայ: Ինչ երջանիկ էք Վանիկա, որ Աստուած ձեզ այդպիսի գանձ է տւել: Որչափ գոհունակութիւն կարող էք պատճառել դուք մարդկանց: չէ որ ծիծաղը միւսնոյն է, ինչ որ այրելը...

Վանիկան աչքերը խոնարհում եւ պատասխանում էր.

— Գիտցէք...

Մի խօսքով ժամանակը շատ հաճոյալի պէտք է անցնէր, եթէ մեղրի տակառի մէջ Բուրուները պաղնեքով կուրդ չը լցնէր:

Սարսափելի է անյայտ սիրահարների կացութիւնը աշխարհիս մէջ:

Բուրուները յաճախ ինձ հետ բացատրվում էր մտերմօրէն եւ սաստիկ ձանձրացնում, Ես գիտէի Բուրուների վիկտորիային ասած ամէն մի խօսքը եւ ստացած պատասխանները եւ թէ ինչ

կուտայ, գաղտնի ոստիկանութիւնը
իսկոյն կը խուզարկէ ցարին սնցնե-
լիք երկաթուղիին զծին բոլոր պաշ-
տօնեաները: Քիչ մը կասկածելի ե-
րեւցածները իսկոյն պաշտօնեան կը
լան: Յետոյ ամենամեծ ուշադրու-
թեամբ կը քննուի երկաթուղիի գիծը
մէջը առ մէջը, թաղուած տնամտ
գտնելու նպատակով: Այդ շարքեր
կը տեւեռ հարկւններով մարդիկ կը
զբաղին. ցարին մեկնած օրէն մինչեւ
վերադարձը երկաթուղիին գիծը զին-
ւորներ կը հսկեն, օր և գիշեր:

Երբ ցարը քաղաքի մէջ կառքով
կը պտտի, կառքը խաղախնեւորով շը-
ջապատուած կըլլայ, որոնց արտօն-
ուած է ու է վտանգ նկատած միջո-
ցին հրազէն պարպել: Յարին ետեւը
միշտ կանգնած է թիկնապաճ մը աջ
ձեռքը ասրճանակին իսկ ձախ ձեռքը
սուրին վրայ: Յարին կառքը միշտ կը
սլանայ, և միշտ այնպիսի փողոցնե-
րով, որոնք ոստիկանութեան կար-
ծիքով անվտանգ են:

Յարը թատրոն կերթայ այն ատեն,
երբ ոստիկանութիւնը կրաչխառօրէ
թէ վտանգ չըկայ:

Փողովորի մէջ աւանդութիւն մը
կայ որ ցարի սենեակին մէջ միշտ
մեղրամոմէ մարդ մը կայ, ճիշդ ցա-
րին նման. իսկ ինքը ցարը յաճախ
ուրիշ սենեակի մը մէջ կը գտնուի,
կամ թատրոն գացած է, կամ թէ
կըզբօնու գողոցներու մէջ: Այլք-
սանտր երրորդը իրօք իրեն մեղրամո-
մէ արձանը շինել տուած էր յար
եւ նման մէջը մեղքեւորով մը, որու
չնորհիւ զուրը միշտ կը շարժէր եւ
ձեռքը զլուխին կը սանձը բարեւնե-
րուն պատասխանելու համար: Շատ
անգամ կը հրամայէր մոմեղէն ցարը
կառքով պտտցնել ինթերպուրի
փողոցներուն մէջ և մարդիկ խոնար-
հուծեամբ կը բարեւէին անոր:

Օր մը Սօլովիով անուրով մէկը այդ
մոմէ ցարին վրայ ատրճանակ պար-
պել, բայց մոմը կրկին շարունակեց
բարեւել. ու շէտեթիքով գործակա-
լութիւնը Լօնտօն հեռագրից որ Ա-
լէքսանտր այնքան անվրդով մնաց որ
ամբողջ աշխարհ գարմացաւ, ճամբան
կը շարունակէր բարեւել և ձեռքը
զլխին տանիլ: Այն ժամանակ
ամբողջ աշխարհ կարծեց
որ Սօլովիովը նպատակին չէր գար-

կած. իրօք այն զարկած էր մոմէ
ֆիկիւրին կուրծքին, բայց պատահա-
բար մէջի բարեւող մեղքեւան վնաս-
ուած չէր:

Ռուս պալատական պատմութիւնը
կա՛ն որ ցարերը իրենց սենեակին մէջ իսկ
պահով չեն. իրիկուն մը Ալէքսան-
ար Կ. կայսրուհուն հետ իր այնպա-
տանոցին մէջ կը գտնուէր. յանկարծ
կայսրուհին կը նկատէ որ լուսամտու-
տի վարագոյրը կը շարժի ու առանց
վրդովուելու ցարին կը խնդրէ եր-
թալ զաւակները տեսնու եւ նորէն
վերադառնալու:

Աննակէն դուրս գալէն վերջ կայս-
րուհին հերթապահ սպան կը զրկէ
ցարին սենեակը որը զինւորներով
ճիւղին նրս մտնելով պատուհանը
բաց կը գտնայ, վար կը նայի եւ կը
տեսնայ մարդ մը, որ մայթի վրայէն
կանգնելով կը փախչի. սպան քանի
մը անգամ հրազէն կը պարպէ բայց
չի կրնար զարնել. մինչեւ հիմա
ալ չի վիտցուր այդ յանգուզն մար-
դու անունը որ ցարին սենեակը կու-
զէր մանկ:

ԱՅՊ. ՎԱՐՄԱՐԱՆԻ ՇՈՒՄԸ

Նշանակը նպատակը է միջոցա-
նորութիւնը: Անոնք պատեհ ա-
ռիթ ճանք են գործելու համար, զի
չորս տարիներէ ի վեր հիմա է որ
յարմար կը դատեն զօգտարանը Ֆի-
լիպէի ազգ. վարժարաններու ճե-
րէն: համըմաստ գրութիւններ կըը-
կեն յիշուածքին և ինքզանքիսին,
ի գովասանքս Միքայէլեանի մը, որ
կէթական մեծ արդիւնքներ տուեր է
եւ իր ֆիլիպէին, առանց մեր գիտնա-
լուն: Կը պատմեն ինչ Պուլկարիոյ
հանրային կլիմութեան նախարարը,
Տօքթ. Շիշմանօֆ «ազգային վարժա-
րան այցելել է, մէկուկէս ժամ աշ-
քէ անցուցեր է զպրոցը, չափազանց
գոհ մնկնել է և համակրալից խօս-
քերով գնահատել է անորէն: ձեռք
բերուած արդիւնքին համար»: Կե-
րեւի թէ տնօրէն, ուսուցիչ և թըզ
թակից, ականջնին խոշոր մը երկն-
ցուցած կսպասեն եղեր որ նախատա-
լից խօսքեր կամ պարսաւ, կամ թէ

կշտամբանք իմանան Պուլկարիոյ հան-
րային կլիմութեան նախարարին բեր-
նէն, ու երբ համակրալից խօսքեր իր-
անք են, իրար անցած լրագրաց զրու-
ներն ափ են առեր ի սփիւռս տիեզե-
րաց հրապարակելու համար այս եզա-
կան աննախընթաց և առականալ ե-
րեւոյթը: «Տօքթ. Շիշմանօֆ ուսուց-
չական համախոհութիւն մը մէջ հրապա-
րակաւ ալ յայտարարել է իր գոհու-
նակութիւնը, մատնանիշ ընելով
Հայոց ազգային վարժարանը (!):»
Այսուհետեւ պիտի տեսնենք Պուլկար
ուսուցիչներ, որք կրթական նախա-
րարի մը գոհունակութեան արժանա-
նայու համար, փոխանակ մանկա-
վարժական ընթացքներու հետեւելու
կրօն Միքայէլեանի պիտի դիմեն, ա-
նոր պիտի աշակերտեն: «Յարգելի
տնօրէնը յուսադրիչ և նպաստաւոր-
պատասխան ստացել է նախարարէն
ի մասին կրթական օրէնքին գործա-
դրութեան, որ գոնագոն անպատե-
հուծեանց դուռ պիտի բանայ եթէ
իրականութիւն գտնէ»: Մեղք որ ա-
սանք չքննադարձանք մը ժամա-
նակին չէ գնահատուել թըզ: Սոր-
հրդոյ անդամներէն որք իրարու քիչ
բաժնուած ալ չէին: Ի՞նչ հարկ պատ-
րիարքարանի պաշտօնական զիմու-
նորուն, որոնցմէ արդիւնք չեւաւ,
անտարակոյս այդուպէս և նպաս-
տաւոր պատասխան պիտի առնուէր
աւշի օրէն եթէ թոյլ տրուէր որ
կրօն Միքայէլեան յանուն պուլկա-
րիոյ հայութեան բանակցէր հանրա-
յին կրթութեան նախարարին հետ:
Ան անդին Ռ. Պէրպէրեան և անոր
Ակիւտարի վարժարան այն աստիճան
զբաղած են այս միջոցին որ խապար
անգամ չուին թէ ի՞նչ պատուական
ինչ անսպասելի և ի՞նչ սխալուն սան-
մը դուրս տուեր են յանձին կրօն Մի-
քայէլեանի որ արեւ արեգակ դարձած
պիտի լուսաւորէ ազգային մանկտոյն
միտքը:

Ան սակայն ֆիլիպէի հայութիւնը
տակաւին կը յամառի նեղի պահել իր
զաւակները կրթական լուսաշող այս
արեւէն և բացի քանի մը մանրուք
մանրուք տղոցմէ, ֆիլիպէի հայ պա-
տանակութիւնը միահողոյն և խուռ-
ներած կը դիմէ Տ. Չօրեանի մաս-
նաւոր վարժարան, ուր մինչեւ հիմա

յետին մտքեր կային այդ պատաս-
խաններում եւ թէ դեռ ինչ պէտք է
աւել...

— Ի՞նչ էք կարծում այս վիկտորի-
այանի կը շարունակէ՞ թէ ոչ:

— Կը շարունակէ: քաջաբար նրաշ-
խառնում էի ես, գաղտնաբար ակ-
ուաներս կը ճտացնելով:

— Լաւ, բայց վիկտորիան ինձ ի՞նչ
պատասխանել կարող է:

— Բայց ես ո՞րտեղիցս գիտեմ:

— Դուք ձեզ իրկտորիան գերում ե-
րեւակայեցէք:

— Աստուած վկայ, սիրելի պարոն,
երբէք օրիորդ չեմ եղել, եւ ոչ ոք
իմ ձեռքս չէ խնդրել:

— Մի երեւակայեցէք, բղաւելով
ներս էր վազում ուսանողը, թէ չէ
Բուրուներ կը սկսի ձեզ համբուրել:

— Ծաղրածու, մոնչում էր Բուրու-
ներ:

— Իսկ դուք, գերազանց մարդ,
Ուսանողը փախում էր եւ շուտով
մենք խոհանոցից լսում էինք նրա
եւ վանիկայի երգելը:

— Է՛հ, ուրեմն դուք վիկտորիայի
տեղում ի՞նչ կը պատասխանէիք, շա-

րունակում էր խայթելինձ Բուրուներ:

— Դրողը տանի ձեզ, ուզում էի
պատասխանել, թէ իմ եւ թէ վիկ-
տորիայի կողմից, բայց Բուրուների
վրա նայելը սարսափելի էր. ոչ թէ
մարդ էր, այլ սիրոյ կենդանի խե-
լապար: Ահա կըսկսի դողալ տունը
թնդացնելով, գլուխը պատերին զար
կելով, ասրճանակ վերցնել... Սա
յաղթում էի իմ կօն տրամադրու-
թիւնը:

— Ի հարկէ այն կը պատասխանէր,
կամ ոչ, կամ մի խօսքով յոյս կը տար:

— Այ, այդպէս չէ՞, ճշմարիտ չէ՞
որ ամէն մի խոհեմ պատուար կին
այդպէս պէտք է վարվի:

— Ամեն մի պատուար եւ խոհեմ
կին:

Այդ խօսքերի վրա Բուրուներ իր
աչքերը սարսափելիօրէն շուտ էր ինձ
վրա, մազերը իրար խառնելով եւ
խեղդող ձայնով առարկում:

— Իսկ եթէ վիկտորիան ոչ պատ-
ւար եւ ոչ էլ խոհեմ է. ու խորա-
սուզում լուսութեան մէջ ժամու կէ-
սի չափ, նստում եւ լուսւ է. լուսւ
եւ հոտայում է. հրաշալի ժամանակ

անցնելու ձեւ: Իսկ լուսամտի ե-
տեւից լսվում էր ուսանողի զարթ
ձայնը որ կատակում էր Անիսայի
հետ:

— Ամենից անհասկանալի այն է, որ
գանգաւորում էր ինձ վիկտորիան
Բուրուներ սկսել է նախանձել, ինչ
իրաւունքով, յայտնի չէ, Բայց վե-
պերի այդ հերոսները միթէ իրա-
ւունքների մասին մտածում են: Սա-
կայն այս պարագային մի քիչ էլ ես
եմ մեղաւոր. ուզում էի թշկել նը-
րան. դիմէի նրա տրամորանութիւնը
ինչպէ՞ս է:— Դուք ինձ սիրում է՞ք:

— Ե՛հ:— Ոչ ոքին էլ չէ՞ք սիրում:—
Ոչ ոքի:— Այդ պարագային սիրեցէք
ինձ, փրկեցէք ինձ. ես առանց ձեզ
սպրկել չեմ կարող. դուք պէտք է ինձ
պատկանէք. դուք բարոյական իրա-
ւունք չունէք ինձ ձեռ անձնասի-
րութեամբ տանջելու: Դուք ոչնչաց-
նում էք ոչ միայն ինձ, այլ եւ իմ
տաղանդը: Ձեզ ամբողջ Ռուսիան
կանխէ... մի խօսքով, եթէ դու դա-
զարկ տարածու թիւն ես, ջեզ իմ
կալածն եմ յայտարարում: Սա էլ
չարացայ ու ասացի եթէ տեղը դա-

առանկ լուսափայլ արեւներ, գրա-
կան աստղեր, մոլորակներ կամ շըջ-
մոլիկներ տեսնող մը չէ գտնուած:
Կը գրեն նաեւ ինչ վարդանայի շա-
ղէսին մէջ «Յարգելի Տնօրէնը» յա-
տուկ յիշատակութիւն մը. բնի բա-
րեհաներ է վանան Մանուկեանի մա-
սին և հոգոց մը բնի առեւր է հան-
գուցելոյն յիշատակին: Տէ՛ ալ եկէք
ու հայ ազգի մէջ ինքզինքը Աւաղ մը
ընող ասանկ մարդու մի՛ հօւնելք

X
Ֆիլիպէ 27 մարտ

ԿՐԷՏԷԻ ԱՊՍՏԱՆՈՒԹԻՒՆԸ

Այս առթիւ աստ «Նոյնի» վր-
բէմի առ թերթին Պուլկարի խղիւ-
կիցը հետեւեալը կը գրէ:


«Մտոյց այբբերդներէ կը հա-
ղորդեմ ձեզի քանի մը մանրա-
մասնութիւններ կրէտէի մէջ տե-
ղի ունեցած անկարգութիւննե-
րու մասին, որ տեղի ունեցաւ
անցեալ ուրբաթ օր, մարտ 11 ին:
Կրէտէի մէջ կազմակերպուել է
լուրջ ընդդիմօդ իր կուսակցու-
թիւն մը իշխան Կօրկիտօսի գէմ.
կուսակցութեան զեկապարնեքը
են Վեներացիս, Պոմպիս և Մանոս
Ընդդիմօդ իրենցու ստանդորդ-
ները կը կարծէին որ իշխանը
եւրոպական արքունիքները այ-
ցելի լին վերջը կրէտացիներու
իզձեբուն վերաբերեալ: Կրէտէն
Յունաստանին միացնելու, կարե-
ւոր նորութիւններ պիտի բերէ:

Մինչդեռ իշխան Կօրկիտօս րա-
ցարձակօրէն յայտարարեց ինչ
քանի մը ոստիկանական սպանե-
րու, որ անոնց ջանքերը կրնան
յալդուրութեամբ պատկուիլ միայն
տաս տարի վերջը: Այս խօսքե-
րէն պարզօրէն կը հասկցուի որ
նշանակուած ժամանակաշրջանի
մէջ առանձին փոփոխութիւններ
չեն նախատեսուիր. այդ պատ-

գարի չէ՞, այն ժամանակ դուք խել-
քի կը դաք. ի՞նչ ընչ — Այն ժամանակ
եւ ձեզ կարհամարհեմ — ինչու հա-
մար՝ հարցնում եմ:— Զր գիտեմ.
միայն զգում եմ որ կարծամարիմ:

— Զեր կողմից, պատասխանում եմ
եւ, շատ վէհանմանութիւն է այնքան
մարել ձեզ հանդէպ ոչ մի պատակա-
նութիւն չունեցող կնոջ, միայն նը-
րա համար որ նա ձեզ չէ փրկու-
նում, այլ ուրիշին: Ետտ լսած ինձ
կարհամարէք, իսկ ձեզ համար ինչ
կանէ՞ք:— Կերթամ անձնատուր կը
լինեմ աշխատութեան, գեղարես-
սին եւ ձեզ կը մոռանամ — Հրաշա-
լի է, ուրեմն գիտեցէք. ես ձեզ հետ
խաղում էի. Սա սիրեկան ունեմ...
օրորվելով հարցրեց, ո՞վ է:

(Շարունակելի)



ճառով ընդգրկմադրներուն առաջնորդները կը վճռեն ուժի գրմել Անոնք ժողովրդին կոչ մը կուղղեն, որով կը հրավիրեն զէնք վերցնել, ով կը համակրի յունական միացման ձգտումներուն:

Այդ կոչին արձագանք կուտան 600 զինուած ապստամբներ: Այդ ուժը քիչ համարելով կրէտական օրինակելի ժանտարմաներու ուժին դէմ, ւրը կազմուած է տեղացիներէ եւ իտալացիներէ, շարժման զեկավարները կոչ մը եւս կուղղեն տեղացի ժանտարմաններուն, որ ոստիկանութիւնը ինկած հերոսներու անունով կը հրաւիրեն արգելք չը հանդիսանալ ապստամբներուն, որոնք կը յանան լուծել կրէտէի համար այնքան կենսական խնդիր մը:

Այս վերջին կոչին մէջ կը շեշտուի այն որ ներկայ դրոշման անհնէն յարմարն է նպատակին հասնելու համար, որովհետեւ մեծ պետութիւնները տրամագիր են իրենց զօրքերու կէսը ետ կանչել:

Գործը այսպէս կարգի դնելով ապստամբները ճիշտակ լինեն առաջ կը շարժուին, կը գրաւեն թերիսանը, որ Գանէայէն 4 ժամ հեռու կը գտնուի և որոշ տեղերու վրայ Յունական դրոշակ կը տնկեն: Կրէտէն ինչպէս յայտնի է իւր ազգային դրոշակը ունի զոր թիւրքիսան, ինչպէս և յունական մամուլը չին ճանչնար:

Ապստամբները իրենց գէմ զըրկուած ժանտարմաները կը դիմաւորեն հրազէն պարպելով, ժանտարմաները կը հասնին ապստամբներուն, առանց հրազէն պարպելու: Վերջի վերջոյ ետ կը դառնան առանց հրազէն պարպելու, թէեւ իրենցմէ քանի մը հոգի վերաւորուած էին:

Երկրորդ օրը ապստամբական շարժումը ինքն իրեն կմարի. որովհետեւ կրէտէի բնակչութիւնը տեղէն չի շարժուիր:

Իշխան Եօրկիոսին քանի մը համոզիչ խօսքերը ուղղուած ժողովրդին, կը բաւեն կղզիին մէջ խաղաղութիւնը վերահաստատելու համար:

ԳՈՂԹԱՆ ԽՈՒՄԲԸ

Երեկուան երեկոյթը հանդիսականներու բազմութեան տեսակէտով բաւական յաջող էր. մանաւանդ երբ աչքի առջեւ բերենք նախորդի և վերջինի միջև եղած կարճ ժամանակամիջոցը: Այդ կը ցուցնէ որ Վառնայի հայ հասարակութիւնը մեծ հաճոյքով կերթայ այն ներկայացումներուն, որ հայ երգեր կերգուին, հայ կեանքը կը պատկերացուի, ու հասան չիւսէյին:

Ներք հայուն կը ներկայանան իրենց գէպի հայութիւնը ունեցած իսկական գոյնով ու կը բորբոքեն վրէժխնդրութեան զգացումը դէպի իրենք, որ մեզի համար ներկայիս մէջ ամենաանհրաժեշտ զգացումներէն մին է, ու պէտք է ընդարձակուի ամբողջ հայ ցեղին մէջ:

Այս տեսակէտով Գողթան խումբը մեծ գովեստի արժանի է և կը շնորհաւորենք:

Սակայն գեղարուեստին ծառայող խումբ մը պիտի աշխատի միշտ պատրաստուած հանդէս գալ հասարակութեան առջեւ: Գողթանի նպատակն է իր երգերով և նուագով Վառնայի հայ հասարակութեան գեղարուեստական ճաշակը ներբացնել, իսկ ներկայացումներով անոր մտածելուն և ձգտումներուն բարոյական լուրջ ուղղութիւն տալ: Այսպիսի ծանր պարտականութիւն ստանձնող խումբ մը միշտ պէտք է չափաւոր և ունենայ որ ներկայացումներով և երաժշտութեամբ մարդոց վրայ ազդելը շատ ծանր գործ է եւ թեթեւութեամբ վերաբերվելը բացարձակ յանցանք կամ չհասկընալ է գործին մեծութիւնը:

Խնդիրը յաճախ բեմ ելլալու մէջ չի կայանար. նորսկանակ մարդիկ միշտ պէտք է նախապէս լաւ պատրաստուին, որչափ ալ որ այդ ժամանակը երկար տեւէ, հապա բեմ ելլան:

Մեր կարծիքով, «Գողթան» խումբը աւելի լաւ կընէ որ ուշ ուշ բեմ ելլայ աւելի հարուստ երգերով, ու միմիայն հայ ներկայ կեանքէն կարճ ու ազդու պատկերներով, քան թէ յաճախ և առանց ու է գնահատելի նորութեան ու մշակման:

Գողթան խումբը չի պիտի շտանայ ամբոխային ծափահարութիւններով. նոյն ամբոխը նոյն ոգեւորութեամբ կը ծափահարէր և դեռ կը ծափահարէ Պէնլեանի, Պապանանի և Թանաչի խումբերուն շատ մը օյինները:

Կը կրկնենք «Գողթան» խումբը շատ ազնիւ, գեղեցիկ և օգտակար պարտականութիւն մը ըստանձնած է դէպի Վառնայի հայ հասարակութիւնը, ու զայդ գիտակցելով պէտք է ջանայ միշտ օրովիլ. լաւ սորուիլ, պատրաստուիլ, լաւ պատրաստուիլ, որչափ ի հարկէ իր անգամներուն կարողութիւնը կը ներէ և ապա բեմ ելլալ, խումբը հասարակութիւնը հայկական ներկայացումներու և երաժշտական երեկոյթներու վարժեցնելու գործին հետ չի պիտի մոռնայ զայն առաջնորդել աստիճանաբար դէպի գեղարուեստին և բարոյականին բարձր խաւերը, որոնց Պէնլեանի և Պապանանի գալոցին վարժուած մեր հասարակութիւնը շատ պէտք ունի:

Եանի գալոցին վարժուած մեր հասարակութիւնը շատ պէտք ունի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սօֆիայի համալսարանին ուսանողներուն բժրոստութիւնը դեռ կը շարունակուի:

Ուսանողութեան մէկ մասը սպառնական ցոյցեր ըրեր է Բոջթայի խմբագրութեան դէմ: Յոյցեր եղեր են և համալսարանի լսարաններուն մէջ, բրօֆէսորներու դէմ:

— Նախարարացեալ Բաջթթօ Սօֆիա վերադարձած է անցեալ օր:

— Իշխան Թէրտինան Իտալիոյ մէջ ժողովրդի կողմէն համակրական ցոյցերու արժանացեր է: Իտալական մամուլը Պուլկարիոյ իշխանի այցելութեանը բաւական կարեւորութիւն կուտայ, շեշտելով: Իտալիոյ խաղաղութեանը Պալքաններու մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պատերազմական նախարարութեան մէջ անհանգստութիւն կը տիրէ, Եէմէնէն տեղեկութիւններ չըստացուելուն պատճառով: Հեռագրական հաղորդակցութիւնը կտրուած է, կը վախցուի թէ Իրաք փաշան շրջապատուած ըլլայ ապստամբներէ:

— Ալպանական շարժումները մեծ ծաւալ կընդունին: Պալատական շրջանակներու մէջ կը խօսին թէ Սուլթանը ցանկութիւն յայտնած է որ Վիլհելմ կայսրը Պոլիս այցելէ:

— Սելանիք պատերազմական միջերթեր զրկուելը վերակուած է:

Հայ Յեղափոխական կոմիտէն Պոլսոյ բոլոր դեսպաններէն խնդրած է որ միջամտեն Սասունի և Զէյթունի կոտորածներուն առթիւ:

— Լուր կը պտտի որ Բալկաններու գիւղերէն միոյն մէջ 100 հոգի պուլկար կոտորուած է:

Թ Ո Ւ Ս Ի Ա

Ն. Ս. Բրէսէյէ կը քաղենք հետեւեւելը. «Ռուսիոյ Սէրկէյ մեծ զուքսին սպաննելն է Եօհան Գալայէվ ծնեալ 1877 յունիս 24 ի Վարչաւիա, հայրը կը կոչուէր Բլաթն Գալայէվ և վաճառականի գործակատարութեամբ կը զբաղէր այս վերջինը մեռած է 1898ին մայրը Բոլին Սօֆիա Բեթթթօյի կը կոչուի:

1902 յունվար 28ին առաջին անգամ ըլլալով Եօհան արտա-

ուհման ճամբորդեց, զնաց կալիցիա և Լէմպէրկ բնակեցաւ ուր ծանօթ էր իբր գասատու Ռուսերեն լեզուի և Բոլոնական «Սլոփո Բոլսքի» լրագրին թղթակից, Յետոյ Լէմպէրկի համալսարանին պատմական բանասիրական ճիւղին հետեւեցաւ: 1902 յունիսին Լէմպէրկի մէջ գրական և գիտական երեկոյթի մը մասնակցեցաւ ատենաբանելով «բանաստեղծութեան իսկութիւնն ու նպատակները» նիւթին վրայ: Այլ այնուհետեւ կարելի չեղաւ Եօհանը տեսնել Լէմպէրկի մէջ: Հէգ մօրը ոգնելու համար Ռուսիա դարձած էր: Եօհան Գալայէվի գատավարութիւնը տեղի պիտի ունենայ ապրիլ 19ին:

— Մարտ 30ին Բեթթթօյուրկին մէջ տեղի ունեցեր է փաստաբանական դատակարգիւն ժողովը: որուն մասնակցեր են կայսրութեան զանազան կողմերէ եկած փաստաբաններ: Ներկայներուն թիւը 250 է եղեր: Նախագահի ճառէն վերջը որ յոյզին հրաւէր կարգացեր է բարենորոգչական շարժման գլուխը անցնիլ, ժողովը որոշեր է փաստաբանական միութիւն կազմել: Քաղաքապետին հրամանով բազմաթիւ ոստիկաններու ժողովին գալը՝ ցրուելու նպատակով, մեծ բողոքներու պատճառ եղեր է, և ժողովը վճռեր է մասնաւոր տնէրու մէջ շարունակել իր նիստերը: Հակառակ կառավարութեան անհամաձայնութեան ուսուցիչներու ժողովը տեղի պիտի ունենայ ապրիլի մէջ:

Իշխան Միրակիչ, նախկին ներքին գործոց նախարար ապրիլ 18ին Բեթթթօյուրկ կապատի, որուն պիտի յանձնուի բարենորոգչական յանձնախմբին նախագահութիւնը:

ՅԲԱՆՍՍԱ

Հասարակապետութեան դէմ բացուած դատագրութեան առթիւ քննութիւնները և խուզարկութիւնները կը շարունակուին: Քանի մը սպաներ ձերբակալուած են և ը հարցաքննուին:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Լուրեր տարածուած են որ Ռուս և ճաբոնական նաւատորմիչները շինական ծովու մէջ ընդարարում ունեցեր են և իբր թէ ճաբոնական քանի մը նաւեր խոր տակուեր են: Ռուս ծովային զլխաւոր վարչութիւնը կը յայտարարէ որ այդ տեսակ տեղեկութիւն մը չունի:

— Ճաբոնացիք մէկ կողմէն կաշխատին Վլատիվօթթօքը պաշարել: Միւս կողմէն զօրավար Լինկվիչի բանակին վրայ քալելը Մօսկոս կրկին մեծ ճակատամարտ մը կը պայտուի:

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варна